ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 06 » մարտ 2025թ. No 1397 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՎԵՐԱԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 40-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության անվտանգության արդյունավետության, և որակի գնահատման N 01/971-25 առ 03.03.2025թ. փորձագիտական եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վերագրանցման ընթացակարգով գրանցել թվով 3 դեղ՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին:

3.«Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Բաղրյանին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության

կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցամատյանում լրամշակման կատարումը՝ ավելացնելով վերագրանցման մասին տվյալները:

4.Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ.Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5.Դեղի վերագրանցման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է նախորդ հավաստագրի գործողության ժամկետը լրանալու հաջորդող օրվանից:

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2025 թվականի մարտի «06 » - ի N1397 - Ա հրամանի

Վերագրանցված դեղերի ցանկ

| ՀՀ | Առևտրային անվանումը | Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը | Դեղաձևը | Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը | Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Բաց թողնման կարգավիճակը | եզրակացության համար և ամսաթիվ | Հավաստագրի գործողության ժամկետը լրանալու օրը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Պրոպոֆոլ-Լիպուրո | պրոպոֆոլ | կիթ ներարկման/ կաթիլաներարկման | 10մգ/մլ; (5) ամպուլներ 20մլ | Բ.Բրաուն Մելսունգեն ԱԳ, Միստելվեգ 2, 12357 Բեռլին | Գերմանիա | Բ.Բրաուն Մելսունգեն ԱԳ, Կարլ- Բրաուն-Շտրասե 1, 34212 Մելսունգեն | Գերմանիա | Դ | 22756 28.02.2025 | 06.02.2025 |
| 2 | Պրոպոֆոլ-Լիպուրո | պրոպոֆոլ | կիթ ներարկման/ կաթիլաներարկման | 10մգ/մլ; (10) ապակե սրվակներ 50մլ | Բ.Բրաուն Մելսունգեն ԱԳ, Կարլ- Բրաուն-Շտրասե 1, 34212 Մելսունգեն, Հեսսեն | Գերմանիա | Բ.Բրաուն Մելսունգեն ԱԳ, Կարլ- Բրաուն-Շտրասե 1, 34212 Մելսունգեն | Գերմանիա | Դ | 22757 28.02.2025 | 06.02.2025 |
| 3 | Իզոկոնազոլ-Մ | իզոկոնազոլ (իզոկոնազոլի նիտրատ) | նրբաքսուք | 10մգ/գ; 25գ ալյումինե պարկուճ | Էսկո-Ֆարմ ՍՊԸ, Նոր Նորք, Միկոյան 13, Երևան | Հայաստանի Հանրապետություն | Մեդիկալ Հորիզոն ՍՊԸ, Արարատի մարզ, ք. Մասիս, Հրանտ Վարդանյան 22 | Հայաստանի Հանրապետություն | Դ | 22758 28.02.2025 | 12.12.2024 |